◆ «Զայն»
**վերլուծական տեղեկատվական լրատու**
Նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

◆ **Լուսաբանել**
իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

◆ **Զայնը հրատարակվում է «Օքսֆամ»**
բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:

◆ **Ծրագիրը իրականացնում է Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն**
ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:



# Զայն

◆ ՀԱՄԱՐ 3 ◆ ԱՊՐԻԼ, 2004
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 2004 թվականի առաջին եռամսյակի տնտեսական հիմնական ցուցանիշները

2004 թվականի առաջին եռամսյակում Հայաստանում գրանցվել է 7.5 տոկոս տնտեսական աճ, որը հաշվարկվում է այս տարվա առաջին 3 ամիսների և անցյալ տարվա առաջին 3 ամիսների համեմատության հիման վրա: Նշենք, որ 2004 թվականի համար կառավարությունը նախատեսել է 7 տոկոս տնտեսական աճ: Պետք է նշել, որ 2001 թվականի կեսերին սկսված և մինչև 2003 թվականի վերջը տևած աննախադեպ բարձր (արտահայտված երկնիշ թվով) տնտեսական աճի ժամանակաշրջանը արդեն կարելի է ավարտված համարել և առաջիկա տարիների համար տնտեսական աճը կանխատեսվում է ավելի համեստ՝ տարեկան մոտ 6-7 տոկոսի շրջանակում:

### Հարկային նորություններ

2004 թվականի առաջին եռամսյակում կառավարությունը հավաքագրել է մոտ 54 մլրդ. դրամի հարկեր, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 18 տոկոսով: Եթե այս ցուցանիշը ճշտենք գների աճով, ապա կստացվի իրական արտահայտությամբ հարկային եկամուտների աճը, որը կազմել է մոտ 10 տոկոս: Նշենք, որ կառավարությունը 2004 թվականի ընթացքում նախատեսել է ունենալ հարկերի մոտ 15 տոկոս աճ, որը իրական արտահայտությամբ, կազմելու է մոտ 11 տոկոս: Հարկային ոլորտին վերաբերվող, տարվա սկզբից արձանագրված, թերևս ամենակարևոր իրադարձությունը հանդիսանում է շահութահարկի գծով հարկային մուտքերի բարձր աճը, մի բան, որը տեղի չէր ունեցել երկար տարիներ:

## Ի՞նչ են հարկերը և ինչի՞ համար են դրանք գանձվում

Հարկերի գոյությունը պայմանավորված է պետության գոյությամբ: Եթե տվյալ երկրի տարածքում բնակվող մարդիկ որոշել են նաև պետություն ունենալ, կամ այլ կերպ ասած, իրենց ընդհանուր խնդիրների լուծման և ընդհանրական շահերի արտահայտման համար ստեղծել հատուկ կառույց, ապա դրա համար հասարակության անդամներից յուրաքանչյուրը պետք է միջոցներ հատկացնի և ստեղծի «հիմնադրամ»: Այդ «հիմնադրամի» միջոցները պետք է օգտագործվեն այն ուղղություններով, որոնք տվյալ հասարակության կողմից կարևոր են համարվում, և որոնց լուծումը դուրս է անհատ անձանց իրավասությունից և կարողություններից: Այդպիսի խնդիրներ կարող են լինել երկրի և հասարակական կարգի պաշտպանությունը, ազգային շահերի և մշակույթի պաշտպանությունը, անվճար կրթությունը և առողջապահությունը, ծերերի, հաշմանդամների, երեխաների և այլ կարիքավորների սոցիալական ապահովությունը, ընդհանուր օգտագործման ճանապարհների կառուցումը և այլն: Հասկանալի է, որ ընդհանրական շահերը և ընդհանուր խնդիրները բազում են և այս ամենի իրականացման, կառավարման, վերահսկման և կանոնների սահմանման համար առանձնացվում են համապատասխան հասարակական մարմիններ (օրինակ խորհրդարան, կառավարություն, նախագահ, նախարարություններ և այլն), որոնց գործունեության փոխհատուցումը նույնպես իրականացվում է ի հաշիվ քաղաքացիների վճարումների:

Ինչպես արդեն նշեցինք, այս ամենի համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ հասարակական «հիմնադրամ», և նշված նպատակների համար կատարել վճարումներ: Մարդկության զարգացման պատմությունը հանգել է նրան, որ ժամանակակից հասարակությունն այդ միջոցների հավաքագրումն իրականացնում է հարկերի միջոցով, որը պարտադիր է բոլորի համար: Այսինքն, «հիմնադրամի» ձևավորման լավագույն և անփոխարինելի տարբերակ ներկայումս համարվում է հասարակության անդամների նկատմամբ հարկադրանքի կիրառման տարբերակը, որի դիմաց այդ նույն հասարակության անդամներին առաջարկվում է այսպես կոչված հասարակական ծառայություններ, որոնց օրինակները վերևում նշեցինք:



### Ինչպե՞ս են չափվում հարկերը

Հարկերը որպես կանոն հավաքագրվում են եկամուտներից կամ հարստությունից: Որպեսզի իրական պատկերացում կազմվի, թե տարբեր պետություններ ինչքան հարկեր են հավաքում, կիրառվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը, որը ցույց է տալիս, թե տարվա ընթացքում երկրում ստեղծված եկամտի ո՞ր մասն է պետությունը հարկահավաքման միջոցով կենտրոնացրել իր ստեղծած «հիմնադրամում», որը կոչվում է պետական բյուջե: Իսկ որպեսզի պատկերացում կազմվի, թե տվյալ հարկը ինչքան ծանր է տվյալ եկամուտ ստացող առանձին անհատի համար, պետք է դիտարկել այսպես կոչված հարկի դրույքաչափը, որը ցույց է տալիս, թե անհատի կամ կազմակերպության միավոր եկամտի կամ շահույթի քանի տոկոսը պետք է վճարվի պետական բյուջե: Այս նշված երկու ցուցանիշները իրար հետ կապված են. ինչքան բարձր են հարկերի դրույքաչափերը, այնքան ավելի մեծ պետք է լինի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:

Իհարկե կարող են լինել նաև բացառություններ, երբ հարկերի դրույքաչափերը բարձր են, բայց կաշառակերության և ստվերային տնտեսության առկայության արդյունքում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը փոքր է: Օրինակ՝ Հայաստանում գործող հարկերի դրույքաչափերը ենթադրում են, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը պետք է կազմեր մոտ 24-25 տոկոս, սակայն իրականում այն կազմում է մոտ 18 տոկոս, որը նշանակում է, որ անարդյունավետության արդյունքում հասարակությունն ամեն տարի կորցնում է ՀՆԱ-ի մոտ 6-7 տոկոսը և այդ չափով էլ երկրում հասարակական ծառայություններ քիչ են մատուցվում:

### Ինչպե՞ս է որոշվում անհրաժեշտ հարկերի չափը

Հայաստանի օրինակով կարող է տպավորություն ստեղծվել, որ բոլոր երկրներում հավաքում են այնքան հարկեր, ինչքան կարողանում են: Դա այդպես չէ. զարգացած երկր-

*Շար. հաջորդ էջում*

## Հայաստանի առաջընթացը Համաշխարհային բանկի «դասակարգման աղյուսակում»

Այս տարվա սկզբին Համաշխարհային բանկի կողմից ստեղծված երկրների զարգացման «դասակարգման աղյուսակում» Հայաստանը առաջընթաց է գրանցել՝ «ցածր եկամուտներ» ունեցող երկրների շարքից տեղափոխվելով «միջին-ցածր եկամուտներով» երկրների խումբ: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե դա ինչ հետևանքների կարող է հանգեցնել,




քանի որ, եթե առաջիկայում Հայաստանը դադարի միջազգային կազմակերպությունների աչքերում ծայրահեղ աղքատ երկիր երևալուց, ենթադրվում է, որ Համաշխարհային բանկը կարող է դադարեցնել «էժան» վարկերի տրամադրումը: Նշենք, որ 2004 թվականի սկզբի դրությամբ նախկին խորհրդային հանրապետություններից Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան, Ուզբեկստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը դեռևս մնում են ամենացածր խմբում:

ՁԱՅՆ

Հիմնադիր և հրատարակիչ
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ

Խմբագիր
Ակսել Թևոսյան

Թողարկման ղեկավար
Սուշեղ Թումասյան

Գեղարվեստական խմբագիր
Քրիստափոր Փախանեան

Լուսանկարները
Հակոբ Բերբերյան
Ֆոտոլուր

Տպաքանակը
1800 օրինակ:
Տարածվում է անվճար:

Հասցե
ՀՀ, ք. Երևան, Սամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 1) 234 420,
www.edrc.am
dzayn@edrc.am

Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ:

Oxfam

*Սկիզբը՝ նախորդ էջում*

ները հավաքում են այնքան, ինչքան անհրաժեշտ է, և դա կարող է լինել հարաբերականորեն շատ կամ քիչ: Այդ երկրներում խնդիրը կայանում է ոչ թե հարկ հավաքել կարողանալու մեջ, այլ թե ինչքան է պետք հավաքել: Իսկ թե ինչքան է պետք, դա արդեն պայմանավորված է թե ինչ ծավալի և ինչպիսի հասարակական ծառայություններ է պետությունն ուզում մատուցել: Այսպես, եթե կառավարությունն ընտրվել է անվճար բուժօգնության ընդլայնման խոստումներով, ապա այն պետք է բարձրացնի հարկերը և կատարի այդ ծախսերը: Մյուս կողմից, եթե հասարակությունը որոշել է հրաժարվել որոշ հասարակական ծառայություններից, օրինակ՝ տրանսպորտային կազմակերպություններին բյուջեից օգնություն տալու միջոցով երթևեկության վճարները ցածր պահելուց, ապա կառավարությունը կարող է փոքրացնել նաև հարկերը, քանի որ դրա մի մասի կարիքն արդեն չկա, քանի որ հասարակությունն ի դեմս ընտրված կառավարության որոշել է հրաժարվել տրանսպորտի գները էժան պահելու քաղաքականությունից: Այսինքն, կայացած երկրներում հավաքվող հարկերի գումարը կախված է այն հանգամանքից, թե հասարակությունն ինչպիսի խնդիրներ է իր առջև դնում:

Եվրոպական երկրների մեծ մասը 20-րդ դարի կեսերից սկսեց որդեգրել մեծ ծավալով հասարակական ծառայություններ մատուցելու ռազմավարություն՝ շեշտը դնելով հիմնականում սոցիալական, կրթության և առողջապահության ծախսերի վրա: Այդ երկրները, պահպանելով կապիտալիստական տնտեսությունը, կարողացան հասարակության մեջ ձևավորել ավելի շատ հարկեր հավաքելու, այսինքն ավելի շատ եկամուտ վերաբաշխելու վերաբերյալ համաձայնություն: Դրանով իսկ, այդ երկրները «սոցիալական պետության» գաղափարը  մեծ հաջողությամբ զուգակցում են շուկայական տնտեսության հետ, որն իրականացվում է համընդհանուր համաձայնությամբ՝ հարկեր հավաքելու միջոցով: Ներկայումս, որոշ երկրներում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է ավելի քան 50 տոկոս, որը նշանակում է, որ երկրում ստեղծված եկամտի կեսը վերաբաշխվում է ընդհանուր հիմնադրամի միջոցով: Դա կարող էր անհավանական թվալ դեռևս 40-50 տարի առաջ:

Կան նաև այլ զարգացած երկրներ, օրինակ ԱՄՆ-ը, որոնք զերծ են մնացել հասարակական ծառայությունների ընդարձակումից և հեռու են եվրոպական չափանիշներով սոցիալական պետություն լինելուց: ԱՄՆ-ը հարկերի ձևով հավաքագրում է ՀՆԱ-ի ընդամենը 25 տոկոսը, որը նշանակում է, որ պետությունը մոտ 2 անգամ ավելի քիչ հասարակական ծառայություններ է մատուցում քան եվրոպական երկրները: Այս քաղաքականության համակիրները պնդում են, որ սա ավելի նախընտրելի է քան եվրոպական մոդելը, քանի որ ցածր հարկադրույքները նպաստում են գործարարության զարգացմանը, երկիրն առավել է հարստանում, և այդ պայմաններում գրեթե բոլորը կարող են ինքնուրույն հոգալ իրենց կրթության, ծերության, առողջապահության հարցերը, այնպես որ պետության միջամտության կարիք չկա: Իսկ եվրոպական մոդելի համակիրները պնդում են, թե պետությունը պետք է մեծ ծավալի հասարակական ծառայություններ մատուցի՝ դրանով հնարավորինս հավասարեցնելով հասարակության բոլոր անդամների հնարավորությունները: Իսկ դրա համար անհրաժեշտ է շատ հարկեր հավաքել:

Այսպիսով, կարևոր է եզրակացնել, որ նորմալ պայմաններում հարկային քաղաքականությունն ածանցվում է հասարակական ծառայությունների անհրաժեշտ ծավալներից: Ինչ որոշում կայացվի բյուջեի ծավալի, այսինքն անհրաժեշտ ծախսերի վերաբերյալ, այդքան էլ հարկեր կհավաքվի:

## Հայաստանի առանձնահատկությունները

Հայաստանում ներկայումս հակառակն է, պետության կողմից մատուցվող հասարակական ծառայությունների ծավալը կախված է այն հանգամանքից, թե ինչքան հարկեր է պետությունը կարողանում հավաքել տվյալ պահին: Ինչպես արդեն նշեցինք, առկա հարկային դրույքաչափերի պայմաններում Հայաստանում կարող էր հավաքվել ավելի շատ հարկեր, բայց ներկայումս հարկահավաքն արդյունավետ չէ: Դա նախ և առաջ պայմանավորված է ստվերային տնտեսության մեծ չափերով: Ստվերային տնտեսությունն իր հերթին կարելի է բաժանել երկու մեծ խմբերի. ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է պետական մարմիններում կաշառակերության և հովանավորչության առկայությամբ և ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է որոշ հնարամիտ տնտեսվարողների կողմից, առանց հարկային մարմիններին կաշառք վճարելու, հարկերից խուսափելու կարողությամբ: Այս երկրորդն իհարկե անհամեմատ ավելի քիչ է տարածված քան առաջինը:

Ըստ տարբեր հաշվարկների, առկա խնդիրների արդյունքում, Հայաստանում տարեկան պակաս է հավաքվում առնվազն 80-100 մլրդ. դրամի հարկեր, այն դեպքում, երբ 2003 թվականին հավաքված բոլոր հարկերի գումարը կազմել է մոտ 280 մլրդ. դրամ: Պատկերացնելու համար, թե այդ կորուստներն ինչքան պիտանի են, կարելի է նշել, որ այդ գումարով կարելի կլիներ պահել 2 լրացուցիչ բանակ:

## Ստվերային տնտեսության պատճառած վնասները

Ստվերային տնտեսության պատճառած վնասները չեն սահմանափակվում միայն նրանով, որ այդ գումարները չեն մտել պետական բյուջե և չեն ծախսվել սոցիալական կամ երկրի պաշտպանունակության բարձրացման նպատակով: Կա ևս մեկ, ոչ պակաս կարևոր պրոբլեմ: Դա երկրի տնտեսական բոլոր գործընթացների աղավաղումն է, որոնք գուցե երկարաժամկետ հասվածի համար ավելի վատ արդյունքների կարող են հանգեցնել քան ներկայիս ուղղակի կորուստները: Խնդիրը կայանում է նրանում, որ տնտեսությունում ոչ բոլորն են հավասարապես օգտվում հարկերից խուսափելու «արտոնությունից» և նա, ով կարողանում է ավելի շատ խուսափել, հայտնվում է հատուկ արտոնյալ դիրքերում և սկսում է դուրս թողնել մյուս գործարարներին՝ այդպիսով գրավելով շուկան: Հնարավոր է, որ այդպես են ձևավորվել Հայաստանում տարբեր ոլորտներում մենոպոլիստական դիրք գրավող շատ խոշոր բիզնեսներ:

Եթե մանր կաշառակերության միջոցով շատերը կարող են «օգտվել» հարկերը ամբողջությամբ չվճարելու հնարավորությունից և այդտեղ ասես թե հավասարակշռություն է ձևավորվել, խնդիրն էականորեն բարդանում է, երբ բարձր հովանավորչության արդյունքում որոշ գործարարներ սկսում են գերիշխան դիրք գրավել: Հարկերից խուսափումը հաջողակ գործարարի համար նույնն է, ինչ որ պետությունից աջակցություն ստանալը: Փաստորեն ստացվում է, որ պետությունն արտոնյալ գործարարներին ամեն տարի կոնկրետ գումար է տալիս, որը նպաստում է նրանց գործունեության ընդարձակմանը, և ինչքան մեծ է հարկերից խուսափումը, այնքան ավելի շատ է աջակցությունը: Դա կոչվում է «տնտեսական աղավաղումներ», քանի որ գործարարները բաժանվում են աջակցություն ստացող և աջակցություն չստացող խմբերի: Բնականաբար, աջակցություն չստացող գործարարները հրաժարվում են ներդրումներ անելուց, կապիտալը երկրից դուրս է հոսում, որի արդյունքում տնտեսությունը չի զարգանում իր պոտենցիալին համարժեք:

## Ի՞նչ հարկեր կան Հայաստանում

Հայաստանում գործում են հետևյալ հարկերը. ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտահարկ, պարզեցված հարկ, հաստատագրված վճարներ, հողի հարկ, գույքի հարկ: Այս հարկերից ամենախոշորը ԱԱՀ-ը և ակցիզային հարկն են, որոնք միասին ապահովում են հարկային մուտքերի կեսից ավելին: Բացի ԱԱՀ-ից և ակցիզային հարկից, մնացած հարկատեսակները հիմնականում ուղղակի հարկեր են, այսինքն վճարվում են անձի կամ կազմակերպության կողմից ստացված եկամտից կամ շահույթից: Իսկ ինչ վերաբերվում է ԱԱՀ-ին և ակցիզային հարկին, ապա դրանք անուղղակի հարկեր են, կամ այլ կերպ ասած սպառողական հարկեր, որոնք վճարվում են սպառողների կողմից, երբ որ ձեռք են բերվում ապրանքներ և ծառայություններ:

## Արդյոք բոլորն են հարկեր մուծում Հայաստանում. *անուղղակի հարկերի դերը*

Հարկեր մուծում են գրեթե բոլորը և նույնիսկ նրանք, որոնք կարծում են թե, իրենք տարբեր ճանապարհներով կարողացել են խուսափել հարկերից: Բանն այն է, որ հարկերը մուծվում են ոչ միայն ստացված եկամտից, այլ, ինչպես նշվեց, ապրանքներ և ծառայություններ ձեռքբերելիս, այսինքն, գրեթե յուրաքանչյուր գնում կատարելու դեպքում: Անուղղակի հարկերը կարծես թե «անտեսանելի» են. մտած են ապրանքի գնի մեջ: Կան ապրանքներ, որոնց գնի մեջ անուղղակի հարկերը շատ մեծ տոկոս են կազմում: Դրանք ակցիզային հարկով հարկվող ապրանքներն են, մասնավորապես ծխախոտը, բենզինը և ոգելից խմիչքները: Օրինակ, ծխախոտի ամեն մի տուփի մեջ միջին հաշվով կա մոտ 100 դրամ հարկ, այսինքն, եթե չլիներ այդ հարկը, ծխախոտի մի տուփը կարող էր մոտ 100 դրամով էժան լինել:

Հայաստանի վերջին տարիների զարգացումները ցույց են տվել, որ պետությունը ավելի մեծ հաջողություններ ունի այդ անուղղակի կամ սպառողական հարկերը հավաքելու գործում, քան ուղղակի հարկերի գծով: Բայց պետք է հիշել, որ այդ սպառողական հարկերը իրենց բնույթով այնպիսին են, որ տոկոսային հարաբերությամբ (հաշվարկված որպես ընտանիքի կողմից ստացված եկամտից տոկոս) աղքատն ավելի շատ է հարկվում քան հարուստը, քանի որ աղքատն իր եկամտի ավելի մեծ մասն է ծախսում, իսկ հարուստը իր եկամտի մի մասը խնայում է, և դրա դիմաց սպառողական հարկեր չի վճարում: Այդ առումով խիստ կարևոր են հարկային համակարգի բարեփոխումները և ուղղակի հարկերի կշռի մեծացումը, որի դեպքում կհարկվի առավել շատ եկամուտ ունեցողը և հարկային համակարգը սոցիալապես ավելի արդար կլինի:

## Ամփոփում

Այսօր Հայաստանին պետք են ավելի մեծ ծավալով հասարակական ծառայություններ, սկսած որակյալ անվճար կրթությունից մինչև մարտունակ բանակ: Հասարակության բոլոր անդամները պետք է գիտակցեն, որ դա անհնար է առանց հարկերի հավաքման: Իսկ հարկերի ավելացման համար ամենևին պետք չէ բարձրացնել հարկային դրույքները և հարկային բեռը, այլ պետք է հստակ հասարակական պահանջ դնել հարկահավաքության համար պատասխանատու պաշտոնյաների առջև, ստիպել նրանց զգալ պատասխանատու իրենց հանձնարարված գործի նկատմամբ: Քիչ պակաս կարևոր չէ նաև հասարակության մեջ «հարկային գիտակցության» ձևավորումը, որպեսզի բոլորը հասկանան, որ կաշառքի միջոցով հարստություն դիզող յուրաքանչյուր հարկահավաքը պաշտոնյա, կամ հարկերից խուսափող յուրաքանչյուր գործարար կամ սովորական քաղաքացի, ըստ էության, գողանում է Հայաստանի մանուկներից, ծերերից, հիվանդներից, զինվորներից և վնասում մեր երկրի ապագան: